**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ**
**ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

„19„ սեպտեմբերի 2015թ. ԹԻՎ 63-Ա

**ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքային համայնքի ավագանին **Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Հաստատել Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 19-ի հերթական նիստի օ ր ա կ ա ր գ ը՝

1 /64-Ն/. ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Մ.ՄԵԼԻՔՅԱՆ/

2 /65-Ա/. 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՈՒԺԳԻՆ ՔԱՄԻՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎՆԱՍՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑ-ՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԻՍՐԱՅԵԼՅԱՆ/

3 /66-Ն/. ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՎԱԾ, ՁԱՐԴՈՆԻ ՎԵՐԱԾՎԱԾ ԱԼՅՈՒՄԻՆԵ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԻՍՐԱՅԵԼՅԱՆ/

4/67-Ա/.ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Մ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

5 /68-Ա/. „ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ" ՀՈԱԿ-Ի ՍԱՆԵՐ ԱԼԵՔՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԵՎ ԷԼԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Մ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

6 /69-Ա/. ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 13 ՏԱՆ ԲՆԱԿԻՉՈՒՀԻ ԺԵՆՅԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ/

7 /70-Ա/. ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 62 ՏԱՆ ԲՆԱԿԻՉՈՒՀԻ ԱՆԱՀԻՏ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ/

8 /71-Ա/. ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕՐԲԵԼԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 42 ՏԱՆ ԲՆԱԿԻՉՈՒՀԻ ԳՈՀԱՐԻԿ ՇԱՀԳԵԼԴՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Կողմ - 11 դեմ-0 Ձեռնպահ-0

Ավետիսյան Հերման
Բենիամինյան Կարեն
Գալստյան Արթուր
Թերմոյան Արման
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Մնացականյան Հարություն
Նազարյան Գոռ
Պետրոսյան Գաբրիել
Վարդապետյան Վաչագան
Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԳԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---

„19„ սեպտեմբերի 2015թ. ԹԻՎ 64-Ն

## ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասին, „Բյուջետային համակարգի մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի ու 28-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի թիվ 993-Ա որոշման.

**Քաղաքային համայնքի ավագանին** Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Արտաշատի քաղաքային համայնքի 2015 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերի առաջարկվող փոփոխությունները՝

1. Թույլատրել Արտաշատի քաղաքային համայնքի 900415002584 եկամտային հաշիվը /ՀՀ պետ.բյուջեից ընթացիկ ծախսերի կատարման համար տրվող սուբվենցիաներ/ ավելացնել 39800000 /երեսունինը միլիոն ութ հարյուր հազար/ դրամով, այն համապատասխանաբար ուղղելով բյուջեի ծախսային մասի 06.06.01.52 գործառնական դասակարգման /բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում/ 4251 հոդվածին՝ ավելացնելով այն 39800000 /երեսունինը միլիոն ութ հարյուր հազար/ դրամով՝ ս/թ օգոստոսի 22-ին տեղի ունեցած ուժեղ քամիների հետևանքով Արտաշատ քաղաքի բազմաբնակարան շենքերի վնասված տանիքների ընթացիկ նորոգման հետ կապված ծախսերն ապահովելու համար:
2. 08.01.01.52 գործառնական դասակարգման / հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում/ 5134 հոդվածը պակասեցնել 600000 /վեց հարյուր հազար/ դրամով, համապատասխանաբար ուղղելով 06.06.01.52 գործառնական դասակարգման /բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում/ 5134 հոդվածին ավելացնելով այն 600000 /վեց հարյուր հազար/ դրամով՝ բազմաբնակարան շենքերի տանիքների ընթացիկ նորոգման աշխատանքների հետ կապված նախագծանախահաշվային աշխատանքներն ապահովելու համար:

Կողմ - 11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավետիսյան Հերման
Բենիամինյան Կարեն

Գալստյան Արթուր

Ջերմոյան Արման

Հովհաննիսյան Վազգեն

Մելքոնյան Վանիկ

Մնացականյան Հարություն

Նազարյան Գոռ

Զադոյան Գարիկ

Վարդազարյան Վաչագան

Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԳԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ**
**ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

„19„ սեպտեմբերի 2015թ. ԹԻՎ 65-Ա

## 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՈՒԺԳԻՆ ՔԱՄԻՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎՆԱՍՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

2015 թվականի օգոստոսի 22-ին տեղի ունեցած ուժգին քամիների հետևանքով Արտաշատ քաղաքի տարածքում տեղի է ունեցել ավերածություններ: Վնասվել են 46 բազմաբնակարան բնակելի շենքերի, 41 սեփական տների տանիքներ: Ամբողջությամբ վնասվել են Պատկանյան փողոցի թիվ 62/4, Գործարանային փողոցի թիվ 2 և թիվ 4 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքները:

Արտաշատի քաղաքային համայնքում վնասված բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերականգնման և վերանորոգման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 31.08.2015 թվականի թիվ 993-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության պահուստային ֆոնդի հաշվին „Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին„ հոդվածով 39800,0 հազար ՀՀ դրամ է հատկացվել Արտաշատի քաղաքային համայնքին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 30.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի 6-րդ ենթակետի „ա„ պարբերության պահանջներով և հաշվի առնելով այն, որ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին չի երաշխավորվում բարենպաստ եղանակային պայմաններ, հնարավոր է եղանակային պայմանների վատթարացում, անձրևներ և քամիներ.

**Քաղաքային համայնքի ավագանին** Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թույլատրել 2015 թվականի օգոստոսի 22-ին ուժեղ քամիներից քաղաքային համայնքի տարածքում վնասված բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերականգնման և վերանորոգման աշխատանքների գնումները կատարել առանց հայտարարության նախապես հրապարակելու՝ բանակցային ընթացակարգով:

Կողմ - 11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավետիսյան Հերմոն
Բենիամինյան Կարեն
Գալստյան Արթուր
Ջերմոյան Արման
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Մնացականյան Հարություն
Ղազարյան Գոռ
Պողոսյան Գաբրիել
Վարդազարյան Վաչագան
Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԳԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ**
**ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

„19„ սեպտեմբերի 2015թ. ԹԻՎ 66-Ն

**ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՎԱԾ, ՋԱՐԴՈՆԻ ՎԵՐԱԾՎԱԾ ԱԼՅՈՒՄԻՆԵ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Արտաշատի քաղաքապետարանի վարչական շենքի ջեռուցման համակարգի կառուցման և ալյումինե պատուհանների ապամոնտաժման հետևանքով ջարդոնի է վերածվել 284 քմ 2500 կգ ալյումին պատուհանների շրջանակները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության „Տեղական ինքնակառավարման մասին„ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, հիմք ընդունելով „ԱՆԻԿՈՄ„ ՍՊ ընկերության կողմից, ապամոնտաժված, ջարդոնի վերածված ալյումինե պատուհանների շրջանակների շուկայական օգտահանության արժեքի մասին տրված թիվ ԱԳ-15/10 հաշվետվությունը.

**Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

1. Թույլատրել աճուրդային կարգով օտարելու քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, քաղաքապետարանի վարչական շենքի ապամոնտաժված, ջարդոնի վերածված ալյումինե պատուհանների շրջանակները:
2. Ջարդոնի վերածված ալյումինե պատուհանների շրջանակների աճուրդային կարգով օտարման մեկնարկային գին սահմանել 712500 /յոթ հարյուր տասներկու հազար հինգ հարյուր/ 22 դրամ;
3. Աճուրդն անցկացնել բաց-դասական եղանակով:

Կողմ - 11 դեմ-0 ձեռնպահ-0

Ավետիսյան Հերմոն
Բենիամինյան Կարեն
Գալստյան Արթուր
Ջերմոյան Արման
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Մնացականյան Հայրապետ

Լազարյան Գոռ

Թոդոսյան Գաբրիել

Վարդազարյան Վաչագան

Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԳԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

„19„ սեպտեմբերի 2015թ. ԹԻՎ 67-Ա

**ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Կրթության մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ, „Լիցենզավորման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածների առաջին կետերով, „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և հաշվի առնելով Արտաշատ քաղաքի համայնքային ենթակայության նախադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների գրությունները.

**Քաղաքային համայնքի ավագանին** Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Արտաշատի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող մանկապարտեզ ՀՈԱԿ-ների զբաղեցրած շենք-շինությունները անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրել Արտաշատ քաղաքային համանքի ենթակայության նախադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ համաձայն հավելվածի:
2. Օրենքով սահմանված կարգով կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել Արտաշատ քաղաքի համայնքային ենթակայության նախադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջոցների հաշվին:
4. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի վրա:

Կողմ - 11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0

Ավետիսյան Հերմինե
Բենյամինյան Կարեն
Գալստյան Արթուր
Զերմեյան Արման
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Մնացականյան Հարություն
Նազարյան Գոռ
Պողոսյան Գաբրիել
Վարդազարյան Վաչագան
Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԳԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 1

| N | ՀՈԱԿ-ների անվանումը | Շինության հասցեն | Շինության զբաղեցրած տարածքը |
|---|---|---|---|
| 1. | Թիվ 1 մանկապարտեզ | ք. Արտաշատ, Նար-Դոսի 1 | 1891.7 քառ. մ. |
| 2. | Թիվ 3 մանկապարտեզ | ք. Արտաշատ, Գուլնցյան 9 | 1980.3 քառ. մ. |
| 3. | Թիվ 4 մանկապարտեզ | ք. Արտաշատ, Հր. Թոփմասյան 13 | 3117.2 քառ. մ. |
| 4. | Թիվ 5մանկապարտեզ | ք. Արտաշատ, Շիրվանզադե 17 ա | 2478.9 քառ. մ. |
| 5. | Թիվ 6 մանկապարտեզ | ք. Արտաշատ Օրբելի 79 ա | 2335.1/2748.4 քառ. մ. |
| 6. | Թիվ 7 մանկապարտեզ | ք. Արտաշատ  Շահումյան 21 | 371.4 քառ. մ. |
| 7. | Թիվ 8 մանկապարտեզ | ք. Արտաշատ Կամոյի 18 ա | 933/1048,1 քառ.մ. |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**,,19,, սեպտեմբերի 2015թ.** **ԹԻՎ 68-Ա**

,,ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ-Ի ՍԱՆԵՐ ԱԼԵՔՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԵՎ ԷԼԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Արտաշատ քաղաքի Մարքսի փողոցի թիվ 7 շենքի թիվ 25 բնակարանի բնակչուհի Ծաղիկ Սարգսյանի ընտանիքի սոցիալապես անապահով վիճակը և ընդառաջելով նրա խնդրանքին.

**Քաղաքային համայնքի ավագանին** Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թույլատրել ,,Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի սաներ Ալեքս Համբարձումյանին /ծնվ. 09.03.2010 թվականին/ և Էլեն Սարգսյանին /ծնվ.18.08.2012 թվականին/ ազատել ծնողական վարձավճարից մինչև դպրոց հաճախելը, սկսած ս/թ սեպտեմբեր ամսից:

Կողմ - 11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավետիսյան Հերման
Բենիամինյան Կարեն
Գալստյան Արթուր
Հեքիմյան Արման
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Մնացականյան Հարություն
Նազարյան Գոռ
Պողոսյան Գաբրիել
Վարդազարյան Վաչագան
Վարդանյան Ռաֆիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԳԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

„19„ սեպտեմբերի 2015թ. ԹԻՎ 69-Ա

**ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 13 ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԺԵՆՅԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Հողի հարկի մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով ու „Գույքահարկի մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, հաշվի առնելով Արտաշատ քաղաքի բնակչուհի Ժենյա Ստեփանյանի ընտանիքի սոցիալական ծանր վիճակը և ընդառաջելով նրա խնդրանքին.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Արտաշատ քաղաքի Խանջյան փողոցի թիվ 13 տան բնակչուհի Ժենյա Ստեփանյանին տալ հողի հարկի արտոնություն 12893 /տասներկու հազար ութ հարյուր իննսուներեք / դրամի չափով և շինության գույքահարկի արտոնություն 1758 /մեկ հազար յոթ հարյուր հիսունութ/ դրամի չափով, ընդամենը՝ 14651 /տասնչորս հազար վեց հարյուր հիսունմեկ / դրամ:

Կողմ - 11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավետիսյան Հերմոն
Բենիամինյան Գարեն
Գալստյան Արթուր
Ջերմոյան Արման
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Մնացականյան Հարություն
Նազարյան Գոռ
Քոչոյան Գաբրիել
Վարդազարյան Վաչագան
Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԳԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ**
**ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

„19„ սեպտեմբերի 2015թ. ԹԻՎ 70-Ա

**ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 62 ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԱՆԱՀԻՏ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Գույքահարկի մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, հաշվի առնելով Արտաշատ քաղաքի բնակչուհի Անահիտ Նիկողոսյանի ընտանիքի սոցիալական ծանր վիճակը և ընդառաջելով նրա խնդրանքին.

**Քաղաքային համայնքի ավագանին** Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Արտաշատ քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 62 տան բնակչուհի Անահիտ Նիկողոսյանին տալ շինության գույքահարկի արտոնություն 30708 /երեսուն հազար յոթ հարյուր ութ / դրամի չափով:

Կողմ - 11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավետիսյան Հերման
Բենիամինյան Կարեն
Գալստյան Արթուր
Զեյթունյան Արման
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Մնացականյան Հարություն
Ղազարյան Գոռ
Պողոսյան Գարիկ
Վարդազարյան Վաչագան
Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԳԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
## ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---

,,19,, սեպտեմբերի 2015թ. ԹԻՎ 71-Ա

**ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕՐԲԵԼԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 42 ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԳՈՀԱՐԻԿ ՇԱՀԳԵԼԴՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ,,Հողի հարկի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, հաշվի առնելով Արտաշատ քաղաքի բնակչուհի Գոհարիկ Շահգելդյանի ընտանիքի սոցիալական ծանր վիճակը և ընդառաջելով նրա խնդրանքին.

**Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Արտաշատ քաղաքի Օրբելի փողոցի թիվ 42 տան բնակչուհի Գոհարիկ Շահգելդյանին տալ հողի հարկի արտոնություն 56034 /հիսունվեց հազար երեսունչորս/ դրամի չափով:

Կողմ - 11 Դեմ-0 Ձեռնպահ 0

Ավետիսյան Հերմոն
Բենիամինյան Կարեն
Գալստյան Արթուր
Դեմիրչյան Արման
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Մնացականյան Հարություն
Նազարյան Գոռ
Պողոսյան Գարեգին
Վարդազարյան Վաչագան
Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԳԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ